ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11

12 հունվարի 2013 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ N 67 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԹՈՒՐ ԱՐԱԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Թումանյան N 67 հասցեի բնակիչ Արթուր Արաի Ասլանյանի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արթուր Արաի Ասլանյանի կողմից 2010 թվականին ք. Մարալիկ Հր. Շահինյան փողոց նախկին <<Լուսատեխնիկ>> գործարանին պատկանող, այժմ իր սեփականությունը հանդիսացող N 1 մասնաշենքի N 2 մասնաբաժնի հողամասում 2010 թվականին կառուցվել է ինքնակամ ավտոտնակ, նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման>> կարգի 22.1 կետի դ) ենթակետի և հաշվի առնելով, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները, կառույցը կառուցված չէ ինժեներական տեխնիկական օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ճանաչել Մարալիկ քաղաքի բնակիչ Արթուր Արաի Ասլանյանի (ծնված 13.02.1987թ.) սեփականության իրավունքը Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոց N 1 մասնաշենքի N 2 մասնաբաժնի հողամասում 2010 թվականին ինքնակամ կառուցված 86 քմ մակերեսով ավտոտնակի նկատմամբ,՝ վճարելով 110940 (մեկ հարյուր տաս հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ:
2. Գույքային իրավունքների պետական գրանցումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 12

12 հունվարի 2013 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԹՈՒՐ ԱՐԱԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 28-ի N 2387-Ն որոշմամբ՝ Մարալիկ քաղաքի բնակիչ Արթուր Արաի Ասլանյանի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակը հասցեավորելու նպատակով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոցի N 1 մասնաշենքի N 2 մասնաբաժինը հասցեավորել ք. Մարալիկ Հր. Շահինյան փողոց 4-րդ նրբանք N 17:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ